ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հոկտեմբերի 2025 թվականի № 428-Ա

ՀԱՅԿ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2335-Ն որոշման № 1 հավելվածի 3-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2025 թվականի օգոստոսի 4-ի № ԴԽ/17.3/26601-2025, օգոստոսի 8-ի № ԴԽ/17.3/27196-2025 և օգոստոսի 26-ի № ԴԽ/17.3/29376 գրությունները՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալ ***Հայկ Մկրտչյանին*** 2025 թվականի հոկտեմբերի 27-ից նոյեմբերի 11-ը ներառյալ գործուղել քաղաք Ֆուճոու (Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն)՝ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարության կողմից կազմակերպվող «Հայաստանի տեղական ինքնակառավարման մարմինների համար տարածաշրջանային տնտեսության զարգացում» խորագրով դասընթացին մասնակցելու համար:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը *(հաշվապահական հաշվառման բաժնին)*՝ ընդունել ի գիտություն, որ գործուղման հետ կապված ծախսերը հոգում է հրավիրող կողմը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ա. ՄԱՀԱԿՅԱՆ**

2025 թվականի հոկտեմբերի 23
ք. Հրազդան